

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ**

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՄԵՐԻ ՍՏԵՓԱՆԻ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԸ

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Ա. Ստեփանյան

Երևան 2023

	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն	Էջ
	Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն	3
ԳԼՈՒԽ I	«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակության և կառուցվածքի նորարական մոտեցումները	6
1.2	Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի որոշ առանձնահատկությունները և դրա արդիականացմանը առաջադրվող պահանջները	16
1.3	Ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ հետաքրքրությունը որպես դպրոցականների ակտիվությունը բարձրացնող գործոն	28
	• Եզրակացություններ	44
	• Առաջարկություններ	46
	• Օգտագործված գրականության մատենագիտական ցանկ	48

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ֆիզիկական կուլտուրա» առարկան յուրահատուկ կրթական առարկա է, որը շոշափում է երեխայի կենսաբանական, հոգեբանական և սոցիալական էությունը: Այն հանդիսանում է բազային կրթության բաղկացուցիչը և կազմակերպվում է սիստեմատիկ ու նպատակաուղղված, իրականացնելով յուրահատուկ, միայն իրեն հասանելի, սոցիալ-մանկավարժական գործառույթներ {33}:

Հանրակրթական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության համապատասխան ձևերը կարող են ոչ միայն բացահայտել անհատի շարժողական հնարավորությունները, այլև՝ ներդաշնակորեն զարգացնել նրան {27}:

Ամբողջ աշխարհում, ինչպես նաև մեր երկրում, տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունների ֆոնի վրա դպրոցական ֆիզիկական կուլտուրան ապրում է լուրջ ճգնաժամ: Աճող սերնդի առողջության վիճակը, ֆիզիկական պատրաստությունը և ֆիզիկական զարգացումը գտնվում են ցածր մակարդակի վրա {4, 42}, դասավանդման ավանդական ձևերը չեն օժանդակում դեռահասների և պատանիների կողմից ֆիզիկական կուլտուրայի արժեքների յուրացմանը {23}: Չնայած այս ամենին «Ֆիզիկական կուլտուրա» առարկան կամ ֆիզիկական կուլտուրայի դասը մնում է աճող սերնդի ֆիզիկական դաստիարակության իրականացման հիմնական ձևը: Սրանից ելնելով ընդհանուր կրթության կառուցվածքի և բովանդակության արդիականացման առաջնային ուղղությունը հանդիսանում է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման արդյունավետության և որակի բարձրացումը: Ներկայումս այդ գործընթացը դժվարեցված է մի շարք գործոններով. առարկայի հանդեպ ձևավորված ավանդական կարծրատիպերով, նրա բովանդակության մասին սխալ պատկերացմամբ՝ որպես գործունեության միատեսակ ձևի, դասավանդման ընթացքում նորամուծությունների ներդրման թերահավատությամբ: Վերը նշվածները շեշտադրում են հիմնախնդրի արդիականությունը և պահանջում են լուրջ ուսումնասիրություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ է ուսումնասիրել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակությունը և կառուցվածքն արդի պայմաններում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Նպատակի իրագործման և վարկածի ստուգման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ընթացքում կիրառվող նորարարական մոտեցումները:
2. Բացահայտել ֆիզիկական կուլտուրայի դասի նկատմամբ աշակերտների վերաբերմունքը և նրանց հետաքրքրության բարձրացման հիմնական ուղիները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ: Առաջադրված խնդիրների իրագործման համար ընտրվել են հետևյալ մեթոդները,.

1. Հետազոտության հիմնախնդրին վերաբերող գրականության աղբյուրների ուսումնասիրում, վերլուծում և ընդհանրացում:
2. Մանկավարժական դիտումներ:
3. Սոցիոլոգիական հարցում:
4. Մաթեմատիկական վիճակագրություն:

ԳԼՈՒԽ I. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակության և կառուցվածքի նորարական մոտեցումները

Սոցիալ-տնտեսական, ռազմավարական անվտանգության, ինչպես նաև գիտական և մշակութային տեսանկյունից դպրոցականների առողջական վիճակը, որը որոշում է հանրապետության բնակչության առողջության և տնտեսության կայունացման հիմնական միտումները, հանդիսանում է հասարակության ձեռքբերումների կարևորագույն ցուցանիշ: Այդ իսկ պատճառով դպրոցահասակ երեխաների ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացումը դիտարկվում է որպես ֆիզիկական կուլտուրայի զարգացման առանցքային և ժամանակակից հասարակության գերակա հիմնախնդիրներից մեկը: Նման պայմաններում առաջնային է համարվում այդ գործընթացի կազմակերպման կարևորագույն հարցերի ճիշտ և ադեկվատ ընտրությունը:

«Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի, նրա հիմնական դերի, դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգի հենքային, առաջատար օղակի գործառույթները իրագործելու համար անհրաժեշտ է վերաիմաստավորել առարկայի մասին պատկերացումները և նրա բովանդակությունը՝ համապատասխան բազային կրթական առարկայի կարգավիճակի հետ {19, 44}:

Ներկայումս այդ գործընթացը դժվարեցված է հետևյալ գործոններով՝

- Տվյալ առարկայի հանդեպ ձևավորված ավանդական կարծրատիպերով՝ կապված խորապես արմատացած պատկերացմամբ՝ որպես ուղղակի շարժողական ակտիվության կազմակերպման ձևի մասին:
- «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակության մասին սխալ պատկերացմամբ՝ որպես գործունեության միատեսակ ձևի, որը հնարավոր է իրականացնել միայն պարապմունքների մի տեսակով՝ գործնական:
- Տեսական նյութի բովանդակության մասին պարզունակ պատկերացմամբ:
- «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ընթացքում նորամուծությունների՝ մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման թերհավատությամբ:

Նշված խոչընդոտող գործոնների հետ կապված, անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերջին ժամանակաշրջանում փորձեր են կատարվում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ընթացքում ներդնել համակարգչային տեխնիկա՝ մասնավորապես տեսական գիտելիքների հաղորդման և աշակերտների գիտելիքների ստուգման ու գնահատման, ինչպես նաև շարժողական գործողությունների ուսուցման գործընթացում {16}:

Չնայած Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության նախարարություններում գոյություն ունեցող փաստաթղթերի, որոնցում հստակ նշագրված է, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերը շաբաթական պարտադիր պետք է լինեն նվազագույնը 3 անգամ {2,3} և՛ վերոնշյալ առարկան, և՛ արտադասարանական պարապմունքներն անցկացնող անձը պետք է ունենա մասնագիտական կրթություն {1}: Այդ պահանջները ի վերջո հանրակրթական դպրոցներում կօժանդակեն ֆիզիկական կուլտուրայի կրթական ուղղվածությամբ պարապմունքների արմատացմանը: Սակայն, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, բազմաթիվ հանրակրթական հաստատությունների աշխատանքային պրակտիկայում նկատվում են հակառակ միտումներ:

Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել, որ հանրակրթական դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դասերի բովանդակությունը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, հաճախ անհամապատասխան են գործող ծրագրի և չափորոշիչի պահանջներին: Դրանք շատ դեպքերում փոխարինվում են ֆիզիկական դաստիարակության այլ ձևերով (էքսկուրսիաներ, ընդհանուր ֆիզիկական պատրաստության պարապմունքներ, կոնկրետ մարզաձևի պարապմունք կամ վատագույն դեպքում, որն առավել անհանգստացնող է, փոխարինվում են այլ առարկաներով):

Ավագ դասարաններում ֆիզիկական կուլտուրայի դասերը, ինչպես նշում են հարցմանը մասնակցած ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 68 տոկոսը, իրենց ամբողջ ներգրավվածությամբ չեն անցկացվում, քանի որ պոտենցիալ դիմորդներն իրենց «պարապմունքները» կատարում են ի հաշվ ֆիզիկական կուլտուրայի դասերի {15, 20}:

Այս բոլորը հանգեցնում է նրան, որ դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության տեսադաշտից փաստացի դուրս են մնում այնպիսի կարևոր տարրեր, ինչպիսիք են արժեքային ուղղվածությունների, կողմնորոշումների, պահանջմունքների, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով պարապմունքների հանդեպ դրդապատճառների ձևավորումը:

Նմանատիպ մոտեցումները հանգեցնում են նրան, որ ընդհանուր միջնակարգ կրթությունը, ֆիզիկական կուլտուրայի ոլորտում, չի իրականացնում իր կարևորագույն գործառույթներից մեկը. չի նպաստում ֆիզիկական կուլտուրայի ոլորտից գիտելիքների ձևավորմանը, աշխատունակության անհրաժեշտ մակարդակի պահպանման և զարգացման գործում դրանց ստեղծագործաբար կիրառման տեխնոլոգիաների ուսուցմանը:

Եթե դպրոցում ուսումնառության ողջ տարիների ընթացքում չի ապահովվում ֆիզկուլտուրային կրթության և հետաքրքրության անհրաժեշտ մակարդակը, ապա հետագա տարիների ընթացքում այդ բացթողման լրացման հավանականությունը շատ փոքր է: Չնայած ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում տեսական պատրաստվածության կարևոր դերին, դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ կրթական հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում: Հասունացել է անհրաժեշտությունը համակցել ֆիզկուլտուրային կրթության շեշտադրումը ֆիզիկական պատրաստվածության հետ՝ դարձնելով այդ գործընթացը ավելի բանական {29, 32}:

Հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակության բովանդակությունը բազմաբնույթ է և ոչ միատեսակ՝ ուսումնական աշխատանք, ֆիզկուլտուրային զանգվածային միջոցառումներ, մարզական-զանգվածային միջոցառումներ, ռեկրեացիոն-առողջարարական գործունեություն {31, 32, 45}: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր ձևում պետք է գերակշռի իրեն առավել բնորոշ ուղղվածություն, այսպես օրինակ՝ ֆիզիկական կուլտուրայի դասի համար՝ կրթադաստիարակչական, սեկցիոն և ընդհանուր ֆիզիկական պատրաստության պարապմունքների՝ մարզական, հատուկ բժշկական խմբերի՝ բուժական ուղղվածություն:

Ասվածից պետք չէ հետևություն անել, որ ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ չպետք է ուշադրություն դարձնել այլ ուղղվածություններին՝ դաստիարակչական, առողջարարական, կրթական: Կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման դեպքում էապես լուծվում են առողջարարական, դաստիարակչական, կրթական ուղղվածության խնդիրները, ինչը հանդիսանում է կրթական գործընթացի արդյունավետ, մեթոդապես ճիշտ և գրագետ կազմակերպման արդյունք:

Տեսական դասերի ընթացքում հայտնելով տեղեկություններ օրգանիզմի վրա ֆիզիկական վարժությունների ներգործման կամ գործնական դասերին՝ շարժումների յուրացման և շարժողական ընդունակությունների մշակման ժամանակ բեռնվածության ճիշտ չափավորման մասին, մենք լուծում ենք առաջինի դեպքում կրթական, իսկ երկրորդի դեպքում առողջարարական խնդիրներ և ցուցաբերում դաստիարակչական դրական ազդեցություն:

Այսպիսով, կրթական, առողջարարական և դաստիարակչական բնույթի խնդիրների իրագործումը, կախված է ոչ այնքան ուսումնական առարկայի գործառույթներից, որքան ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մանկավարժական վարպետության աստիճանից:

Ներկայումս գիտնականների և ֆիզիկական կուլտուրայի մասնագետների համար առավել արդիական և բարդ խնդիրներից է ընդհանուր ֆիզկուլտուրային կրթության բովանդակության ու կառուցվածքի վերամշակումը և գիտականորեն հիմնավորումը, որը պետք է հիմնված լինի սովորողների անձի վրա ֆիզիկական կուլտուրայի ինչպես շարժողական, այնպես էլ՝ ինտելեկտուալ բաղադրիչների հավասարազոր ներգործության վրա {5,8, 36, 43}:

Հանրակրթական դպրոցում ֆիզիկական կուլտուրայի ուսումնական աշխատանքների ընդհանուր կրթական ուղղվածության ուժեղացումը չի նշանակում ավելորդ տեսակայնացման ձգտում և դրա հակադրումը ֆիզիկական պատրաստվածության և առողջության ամրապնդման խնդիրներին: Այն ուղղված է լոկ դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության ոլորտում ինտելեկտուալ և շարժողական բաղադրիչների անհրաժեշտ կրթական մակարդակի համադրության հաստատմանը, որը ներկայումս բացակայում է: Ուշադրությունը սևեռելով ֆիզիկական դաստիարա-

կության ինտելեկտուալացման հիմնախնդրին, պարզ է դառնում, որ նման գործընթացը նպատակ է հետապնդում բարձրացնելու մարդու ֆիզիկական բնության վրա ազդեցության արդյունավետությունը՝ այդ գործընթացում առավել ակտիվորեն ընդգրկելով սովորողների մտավոր կարողությունները: Ֆիզիկական կուլտուրայի ոլորտից գիտելիքների ձեռքբերումը, ֆիզիկական կուլտուրայի ինտելեկտուալ բաղադրիչների ձևավորումը իրենից ներկայացնում է հզոր միջոց, որը նպաստում է ֆիզկուլտուրային ինքնակրթության գործընթացում պարտադիր ուսումնական գործընթացի վերաճմանը, պայմաններ է ստեղծում հասարակության մեջ անձի հաջող ինքնորոշման և սոցիալականացման համար:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագիրը և չափորոշիչը Յու. Գրիգորյանի և Հ. Մինասյանի համատեղ հեղինակությամբ {6}: Ծրագիր և չափորոշիչը նախատեսում է 2 բաղադրիչների՝ բազային և ընտրովի ուսումնական նյութերի յուրացում:

Բազային ուսումնական նյութը (գիտելիքի հիմունքներ, շարժախաղեր, մարզախաղեր, աթլետիկական վարժություններ, մարմնամարզական վարժություններ) ֆիզիկական կուլտուրայի ոլորտում հանրակրթական պատրաստվածության ստանդարտի հիմքն է և համարվում է պարտադիր: Բազային ուսումնական նյութի յուրացումը օբյեկտիվորեն անհրաժեշտ է և պարտադիր յուրաքանչյուր աշակերտի համար՝ անկախ նրանից, թե ինչով նա կցանկանա զբաղվել ապագայում, ինչ ազգության է, հանրապետության որ մարզում է ապրում, ինչպիսին են նրա անհատական առանձնահատկությունները: Բազային բաղադրիչը ֆիզկուլտուրային շարունակական կրթության համակարգի զարգացման համար հանդիսանում է որպես նախապայման:

Ընտրովի ուսումնական նյութի բովանդակությունը (լող, դահուկային պատրաստություն, ըմբշամարտ, շախմատ, ուժային պատրաստություն, գեղարվեստական մարմնամարզություն, սեղանի թենիս, տուրիստական պատրաստություն) պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, դպրոցի հնարավորություններով (մարզահրապարակի, մարզասրահի, մարզագույքի, կահավորանքի և այլնի առկայությամբ), դպրոցում ստեղծված ավանդույթներով, ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի նկատառումներով, աշակերտների նախասիրություններով:

«Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի բովանդակությունը ներկայացվում է բազային և ընտրովի բաղկացուցիչների հետևյալ մոտավոր հարաբերակցությամբ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

«Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի բովանդակության բազային և ընտրովի բաղադրիչների հարաբերակցությունը

Դասարաններ		Ուսումնական նյութի բաշխումը (տոկոսներով)		Դասաժամերի ընդհանուր քանակը ըստ դասարանների
		Բազային	Ընտրովի	
I-IV դասարաններ (տարրական դպրոց)	I դասարան	91,1	8,9	90
	II դասարան	87,5	12,5	64
	III- IV դասարաններ	88,2	11,8	68
V-IX դասարաններ (հիմնական դպրոց)	V, VI, VII դասարաններ	92,1	7,9	102
	VIII- IX դասարաններ	90,9	9,1	88
X-XII դասարաններ (ավագ դպրոց)	X-XI դասարաններ	90,9	9,1	88
	XII դասարան	92,1	7,9	51

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչն անհրաժեշտության դեպքում իրավունք ունի ընտրովի ուսումնական նյութի համար նախատեսված ժամաքանակը օգտագործել բազային բաղադրիչների յուրացման նպատակով:

Այսպիսով, ֆիզիկական կուլտուրայի ոլորտում ընդհանուր կրթության բովանդակությունը պետք է համապատասխանի հետևյալ բաղադրամասերին.

- Ֆիզիկական կուլտուրայի շարժողական և ինտելեկտուալ բաղադրիչների օպտիմալ համադրմանը:
- Սոցիալական երևույթների վերաբերյալ ամբողջական պատկերացման ձևավորման նպատակով՝ գիտության տարբեր բնագավառների գիտելիքների ինտեգրացում, կապված ֆիզիկական կուլտուրայի հետ, ինչպես նաև միջգիտական հիմքով հենքային գիտելիքների, գաղափարների, հասկացությունների, սկզբունքների և տեսությունների ընդհանրացում:

- Ստեղծագործական ընդունակություններ և գործնական հմտություններ զարգացնելու, ֆիզիկական դաստիարակության միջոցներն ու ձեռքբերված գիտելիքներն ամենօրյա կենսագործունեության ընթացքում կիրառելու կարողությունների ձևավորում:
- Ֆիզիկական ինքնակատարելագործման գործընթացում ֆիզկուլտ-առողջարարական պարտադիր ձևերի տրամաբանական անցման կողմնորոշում, որը հիմնված է սեփական ֆիզիկական վիճակի ինքնուրույն խնամքի կայուն սովորույթի անհրաժեշտության և ձևավորման գիտակցման վրա:
- Սովորողների հետաքրքրությունների և նրանց անհատական առանձնահատկությունների, նախասիրությունների հաշվառում՝ ֆիզկուլտուրային մարզական գործունեության ընթացքում:
- Ուսումնական ծրագրերի, չափորոշիչների, պլանների տարբերակցվածությունը, որոնք կթույլատրեն հաշվառել դպրոցի հնարավորությունները, աշխարհագրական դիրքը, դպրոցականների ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստության մակարդակը, նրանց կամային, հուզական և ինտելեկտուալ ներուժը:
- Կազմակերպչական կարողություններ ձեռք բերելու հնարավորություն և ֆիզկուլտ-մարզական գործունեության ինքնուրույն իրականացման առաջնային փորձի կուտակում:

Ֆիզիկական կուլտուրայի ոլորտում ընդհանուր կրթության բովանդակության կառուցվածքը ենթադրում է նվազագույնը 2 բլոկերի առանձնացում՝ կրթական, որն իրենից ներկայացնում է ֆիզիկական կուլտուրայի ինտելեկտուալ բաղադրիչի բազային հիմք, և ֆիզիկական կատարելագործման, որը հանդիսանում է շարժողական բաղադրամասի հիմք:

Կրթական բլոկը ներառում է՝ ֆիզիկական կուլտուրայի ոլորտից հատուկ գիտելիքների, հրահանգչական, կազմակերպչական և մեթոդական կարողությունների ձևավորման, սեփական օրգանիզմի ճանաչողական և բացահայտման միջոցների և մեթոդների ուսուցման տեխնոլոգիան:

Ֆիզկուլտուրային կրթության բովանդակության այդ բաղադրիչի իրագործման արդյունք է հանդիսանում ճանաչողական և պրակտիկ գործունեության նպատա-

կառուղվածության բարձրացումը, ֆիզիկական վարժություններով պարբերաբար զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու գիտակցական պահանջմունքի ձևավորումը: Ֆիզկուլտուրային կրթության բովանդակության տվյալ բաղադրիչը էապես ակտիվացնում է ֆիզիկական դաստիարակության գործընթացը, այն դարձնում է իմաստային և նպատակաուղղված, այդ իսկ պատճառով առավել արդյունավետ է դառնում անձի ֆիզկուլտուրային-մարզական գործունեության ամբողջ համակարգը: Հենց այդ բլոկն է բնորոշում կրթվածության մակարդակը ֆիզիկական կուլտուրայի ոլորտում:

Կրթական բաղադրիչի իրականացման գործընթացում պետք է լուծվեն սովորողների օրգանիզմի վրա ֆիզիկական կուլտուրայի միջոցների անմիջական ազդեցության խնդիրները՝ դրա զարգացման աջակցման և շարժողական ֆունկցիաների կատարելագործման նպատակով:

Նման ազդեցությունը պետք է իրագործվի ֆիզիկական կուլտուրայի գործնական դասերի ընթացքում, ինչպես նաև աշակերտների ֆիզիկական դաստիարակության արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների բոլոր հնարավոր ձևերում: Այդ պարապմունքներն իրենցից ներկայացնում են բովանդակության 2-րդ՝ ֆիզիկական կատարելագործման բլոկի իրականացման հիմնական ձևը: Սակայն պետք է հիշել, որ ուսումնական պարապմունքների քանակի ավելացումը ինքնանպատակ չէ: Կարևոր է համարվում դրանց ռացիոնալ օգտագործումը: Միայն ուսումնական պարապմունքների ավելացման գաղափարը, առանց գոյություն ունեցող մեթոդիկայի վերակառուցման կտանի գաղափարի վարկաբեկման, պրոֆեսիոնալիզմի ցածր մակարդակի ցուցադրման:

Ֆիզիկական կատարելագործման բլոկը միավորում է շարժողական կարողությունների և հնարությունների ձևավորումը, շարժողական ընդունակությունների մշակման գործընթացը, որոնք թույլ են տալիս ընդլայնել շարժողական փորձը, կատարելագործել օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները և ադապտացիայի մեխանիզմները, ինչպես նաև պահովում են շարժողական ակտիվության օպտիմալ մակարդակը: Ֆիզկուլտուրային կրթության բովանդակության այս տարրերը համարվում են ֆիզիկական կուլտուրայի շարժողական բաղադրիչի հիմք:

Ֆիզիկական կուլտուրայի բովանդակության շարժողական բաղադրիչի իրականացման նոր մոտեցման առանձնահատկությունը որոշվում է ոչ միայն շարժողական գործողությունների կատարման ուղղվածությամբ, այլև դրանց տիրապետման միջոցների յուրացմամբ, ինքնակատարելագործման գործընթացում դրանց նպատակային կիրառման կարողությունների ձևավորմամբ՝ հաշվառելով դպրոցականների անհատական առանձնահատկություններն ու նրանց օրգանիզմի հնարավորությունները:

Դրանց իրականացումը ենթադրում է տեսական գիտելիքների և հրահանգչական մեթոդական կարողությունների ստեղծագործական կիրառումը, որոնք ձեռք են բերվում կրթական բլոկի բովանդակության յուրացման գործընթացում:

Կարևոր է ընդգծել, որ ֆիզիկական դաստիարակության ամբողջական կառուցվածքում հենց շարժողական բաղադրիչին է պատկանում մարդու ֆիզիկական ներուժի զարգացման կարևոր դերը: Սակայն կարևոր է ճիշտ կատարել ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում ինտելեկտուալ և շարժողական բաղադրիչների հարաբերակցության շեշտադրումը:

Երբ խոսքը գնում է դասի՝ որպես աշակերտների ֆիզիկական դաստիարակության առաջատար ձևի կամ ընդհանրապես ուսումնական աշխատանքների մասին, կարևորությունը, անկասկած, պետք է տրվի ֆիզիկական դաստիարակության կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրների համակողմանի իրագործմանը:

Ֆիզկուլտուրային-մարզական աշխատանքների այլ ձևերի իրականացման գործընթացում առաջնային դիրքեր պետք է գրավեն վերականգնողական, առողջարարական և մարզական ուղղվածությունները, որոնք ենթադրում են օրգանիզմի ֆիզիոլոգիական, ադապտացիոն համակարգերի վրա անմիջական ազդեցություն:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում անհրաժեշտ է պարբերաբար ստուգել, գնահատել ու հաշվառել պարապրոզների առողջական վիճակը, նրանց ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստության մակարդակը, մարզական գործունեության արդյունքները, ջանասիրությունը, պահելաձևը: Ֆիզիկական կուլտուրայի առաջադիմության ստուգման և գնահատման առարկա են հանդիսանում

դպրոցականների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որոնք ձեռք են բերվում ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Սովորողների առաջադիմության գնահատման ժամանակ բացի գնահատման նորմատիվ միջոցներից, երբ շեշտադրում է կատարվում բոլոր պարտադիր ուսումնական չափորոշիչների կատարման վրա, պետք է անցում կատարել անձնականին, երբ գնահատվում է դասի ժամանակ երեխայի անհատական աշխատանքը՝ կախված նրա ֆիզիոլոգիական և շարժողական ընդունակություններից:

Այսպիսով, հանրակրթական դպրոցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսումնական գործընթացի բովանդակության արդիականացումը ենթադրում է շարժողական գործողությունների որոշակի քանակության պարզ վերարտադրման վերափոխում՝ այդ ոլորտում անհրաժեշտ կրթական մակարդակի ձևավորման համար: Ֆիզիկական կուլտուրայի ուսումնական գործընթացի բովանդակության վերակառուցումը ենթադրում է այդ գործընթացի ինտենսիվացումը, որը պետք է իրականացվի ոչ թե դպրոցում օգտագործվող էքստենսիվ տեխնոլոգիաներով՝ հիմնված բեռնվածության ծավալի և լարվածության բարձրացման վրա, այլև՝ ուսումնական գործընթացի նպատակաուղղվածության բարձրացում, կրթական ուղղվածության հիրավի իրականացում և դրա հիմքում՝ պարապմունքների հանդեպ դրդապատճառների ուժեղացում, ֆիզիկական ինքնակատարելագործում և ուսումնական գործունեությանն անհրաժեշտ հմտությունների զարգացումը:

**ԳԼՈՒԽ 2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԻ ՈՐՈՇ
ԱՌԱՋԱՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴԻԱՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ
ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

Վերջին ժամանակաշրջանում հատկապես խիստ է դրված հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության վերակառուցման և արդիականացման հարցը: Մասնավորապես, ինչպես գիտնականները, այնպես էլ մասնագետ-պրակտիկները փորձում են բացահայտել, թե ինչպիսին պետք է լինի ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասը, ինչպիսին են նրա դասավանդման առանձնահատկությունները: Այս հիմնախնդրի վերաբերյալ իրենց տեսակետն ունեն շատ հեղինակներ:

Նախ և առաջ, ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի կարևորագույն տարբերակիչ գիծը հանդիսանում է սովորողների ներգրավումը, ուսուցիչների հետ համատեղ, ստեղծագործական ուսումնական գործունեություն: Ֆիզկուլտուրային ճանաչողական գործունեությունը խթանվում է տարատեսակ խնդիրների առաջադրմամբ, որոնք սովորողները լուծում են համատեղ աշխատանքի ընթացքում:

Չափազանց կարևոր է, որպեսզի սովորողները հասկանան կատարվող վարժությունների իմաստը ու նշանակությունը և դրա հիման վրա ընկալեն տարբեր շարժումների յուրացման միջոցները: Հենց դրանում է կայանում ինքնուրույնության և ինքնակատարելագործման ուղին: Դպրոցականների մոտ անհրաժեշտ է ձևավորել ոչ միայն այս կամ այն կարողությունները և հմտությունները, այլև՝ պարտադիր նրանց ուսուցանել սովորել: Ի վերջո առանց ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության դրան հասնելը անհնար է:

Հետևաբար, հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակության մանկավարժական գործընթացի վերակառուցման կարևորագույն պայմանը դա պարամունքների ընթացքում համատեղ գործունեությունն է, ուսուցման և դաստիարակության գործընթացում անցումը դեպի հումանիզացման և դեմոկրատացման սկզբունքներին: Մանկավարժական գործընթացի հումանիզացումը՝ ամենից առաջ յուրաքանչյուր աշակերտի անձի անհատական առանձնահատկությունների հաշվառումն է:

Այն իրականացվում է սովորողների փորձի և նվաճումների մակարդակին, նրանց հետաքրքրություններին և հակումներին համապատասխան:

Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի մեկ այլ տարբերակիչ կողմերից է հանդիսանում սովորողների հանդեպ հստակ արտահայտված անհատական մոտեցումը: Այստեղ գլխավորը բոլորին միևնույն պահանջներ առաջադրելը չէ, այլ որպես կանոն դրսևորել անհատական մոտեցում՝ անդադար ուշադրություն դարձնել աշակերտի անձի, նրա հնարավորությունների և հակումների, բնական տվյալների և պատրաստության վրա:

Ժամանակակից դասը կողմնորոշված է սովորողների հանդեպ անհատական մոտեցմամբ, նրանում մեծ ուշադրություն է դարձվում յուրաքանչյուր դպրոցականի հոգեբանական, ինտելեկտուալ և ֆիզիկական պատրաստության առանձնահատկություններին {21, 39}: Նման մոտեցումը թույլատրում է լիարժեք լուծել ֆիզիկական դաստիարակության առջև դրված խնդիրները: Ընդ որում ժամանակակից դասը կողմնորոշված է ոչ միայն ֆիզիկական պատրաստությանը, այլ նաև՝ ֆիզիկական զարգացմանը, սովորողների անձնական հնարավորություններին, նրանց կողմից ուսումնական նյութի անհատական ընկալմանը {12, 14}:

Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի առաջատար միտումների թվում կարելի է նշել նրա ուղղվածության ուժեղացումը դեպի ֆիզկուլտուրային կրթություն: Սա արտահայտվում է մասնագիտական գիտելիքների ավելացմամբ, դրանց խորացմամբ և ընդլայնմամբ: Այստեղ կարևոր նշանակություն պետք է տրվի միջառարկայական կապերին՝ ֆիզիկական կուլտուրա-կենսաբանություն, ֆիզիկական կուլտուրա-մաթեմատիկա, ֆիզիկական կուլտուրա-պատմություն և այլ կապերին {41}: Մեծ ուշադրություն է նաև հատկացվում դասի գեղագիտական կողմին՝ շարժումների կուլտուրային և արտահայտվածությանը, երաժշտության ներքո վարժությունների կատարմանը, սովորողների արտաքին տեսքին:

Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի պահանջներից տարանջատված չէ նաև այնպիսի մշտական արդիական խնդիր, ինչպիսին է սովորողների մոտ ֆիզիկական վարժությունների նկատմամբ հետաքրքրության ձևավորումը: Վերջինս իրականացվում է հետաքրքրի տեղեկությունների հաղորդմամբ, խիստ աշխատա-

կարգերից հեռացմամբ, նրա հուզական հագեցվածության բարձրացմամբ, միջոցների և մեթոդների բազմազանությամբ, ձևանմուշների հրաժարմամբ:

Ֆիզիկական կուլտուրայի դասերին ուսուցչի գլխավոր խնդիրներից մեկը՝ սովորողների դրդապատճառային միջավայրի ձևավորումն է {11, 38}: Գաղտնիք չէ, որ ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների հանդեպ և դպրոցականների ֆիզիկուլտուրային կրթությունում միայն դրական դրդապատճառների դեպքում կարելի է սպասել որոշ շոշափելի արդյունքներ {24, 46}:

Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի բնորոշ գիծ է հանդիսանում նրանում ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցների, մասնավորապես համակարգչի օգտագործումը: Ներկա ժամանակաշրջանում լայնորեն քննարկվում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի աշխատանքում համակարգչի ներդրման հիմնախնդիրը: Համակարգչի հիշողության և նրա տպագրող բլոկի օգտագործումը հնարավորություն է ընձեռում կատարել ուսուցչի հսկայական աշխատանքը (ցուցակների, արձանագրությունների, բժշկական հետազոտությունների, մանկավարժական թեստավորումների արդյունքների կազմում) շատ հեշտ և արագ: Ուսուցիչը համակարգչի հիշողության մեջ մուտքագրում է իր աշակերտների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունը՝ մարդաչափական տվյալները, առողջության մակարդակը, հիվանդությունների հաճախականությունը և այլ անհրաժեշտ տեղեկություններ: Սա ուսուցչին թույլատրում է անհատականացնել պարապմունքները, յուրաքանչյուր աշակերտի համար ընտրել համապատասխան և հասանելի միջոցներ: Բացի վերը նշվածներից, այսօր համակարգիչը շնորհիվ իր դիդակտիկ հնարավորությունների կարելի է լիարժեք կիրառել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ընթացքում, մասնավորապես, տեսական գիտելիքների հաղորդման և աշակերտների գիտելիքների ստուգման ու գնահատման ժամանակ {17}:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գնահատականի նշանակաման ժամանակ անհրաժեշտ է ոչ միայն հաշվառել ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, այլև ֆիզիկական վարժություններով պարապելու սովորողների կարողությունները և հմտությունները, առողջ ապրելակերպի կանոնների պահպանումը: Դպրոցականների ֆիզիկական պատրաստվածությունը նպատակահարմար չէ գնահատել

միայն բացարձակ տվյալներով (նորմատիվների կատարում կամ չկատարում), այլ՝ թեստավորման հենքային արդյունքների համեմատ շարժողական թեստերի արդյունքների աճով: Սովորողների թեստավորման արդյունքների ցուցանիշների աճի տեղաշարժերը միաժամանակ հանդիսանում են և նրանց անհատական հնարավորությունների ցուցանիշներ:

Ֆիզիկական կուլտուրայով և տարբեր մարզաձևերով արտադասարանական պարապմունքները (սեկցիաներ, խմբակներ և այլն) պետք է դիտարկել որպես հավելյալ կրթությունն ստանալու հնարավորություն և որպես շարժողական ակտիվության ու շարժողական պատրաստվածության մակարդակի բարձրացման էական գործոն {13}:

Հստակ է, որ յուրաքանչյուր մանկավարժորեն գրագետ կազմակերպված կրթություն կողմնորոշված է անձի ձևավորմանը, դրանով իսկ հանդերձ այն հանդիսանում է զարգացնող {25, 26}: Կրթությունը, այդ թվում և ֆիզկուլտուրայինը {28}, և այսպես կոչված ազատ դաստիարակությունը, թրեյնինգը և տարերայնորեն ինքնաիրացումը մշտապես զարգացնող է {40}:


Ինչ վերաբերում է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերի քանակին, ապա հանրակրթական դպրոցի բոլոր դասարաններում շաբաթական պետք է լինի 3 ժամից ոչ պակաս: Ցավոք, ինչպես ցույց են տալիս մեր տվյալները, մի շարք դեպքերում այս պահանջը չի կատարվում:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների բազմամյա փորձը, հատուկ հետազոտությունները, սոցիոլոգիական հարցման արդյունքները մեզ հանդուհում են ֆիզիկական կուլտուրայի դասերին խաղային և մրցակցական մեթոդների առավել լայն կիրառման անհրաժեշտության մասին {35}: Ֆիզիկական կուլտուրայի յուրաքանչյուր դաս սովորողների համար պետք է լինի բաց դաս, ճանապարհորդություն դեպի շարժումների հրապուրիչ աշխարհ, ուր դպրոցականները ճանաչում են իրենց օրգանիզմը, յուրացնում շարժողական գործունեության տարածական, ժամանակային, դինամիկ, ուժային և ռիթմիկ բնութագրումները, սովորում են հեշտ կառավարել իրենց շարժումները, արդյունավետ լուծել տարբեր շարժողական խնդիրներ, համեմատել իրենց շարժողական հնարավորությունները:

Հարկ է նշել, որ արտասահմանյան պրակտիկայում խաղային և մրցակցական մեթոդները դասակարգվում են որպես պարապմունքների անցկացման սպորտային-խաղային մեթոդ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս մոդելավորել շարժողական գործողության կատարման պայմանները, ստեղծել խաղային իրավիճակներ, պատվաստել ինքնուրույն գործունեության և համագործակցության կարողություններ՝ ընդհանուր նպատակի իրագործման համար:

Կարևոր է նաև այն, որ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հարցման արդյունքում, մենք ընդգծում ենք նրանց միասնական կարծիքը այն մասին, որ ֆիզիկական կուլտուրայի դասը ինչպես և նախկինում հանդիսանում է տարբեր տարիքի և սեռի դպրոցականների զարգացման, ուսուցման և դաստիարակության հիմնական ձևը: Եվ այլընտրանքային տարբերակ ներկա ժամանակաշրջանում գոյություն չունի: Պատահական չէ ասված, որ դասը արև է, որի շուրջը, ինչպես և մոլորակները, պտտվում են ուսումնական պարապմունքների այլ ձևեր, (նկար 1) որոնց թիվը հասնում է մինչև 80-ի {9}:

Ուստի, ուսումնական գործընթացի առջև դրված խնդիրները կարելի է լուծել միայն դասային ձևերի կիրառման պայմաններում, որոնք հանդիսասանում են այն հիմքը, որը միավորում է հանրակրթական դպրոցի սովորողների աշխատանքային բոլոր ձևերը: Թեկուզ և ֆիզիկական կուլտուրայի դասի կատարելագործման հեռանկարները չեն սպառվել, ներկա ժամանակաշրջանում ոչ մի հայտնի ֆիզկուլտուրային-սպորտային պարապմունք ի վիճակի չէ նրան փոխարինել: Ֆիզիկական կուլտուրայի դասը օրգանապես և կառուցվածքով ընդգրկված է աճող սերնդի կրթության համակարգում և հանդիսանում է ուսումնամանկավարժական գործընթացի հիմնական մասը: Չնայած իր յուրահատկությանը, այն խիստ փոխկապակցված է հանրակրթական այլ առարկաների դասերի հետ:




Նկար 1. Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության մոդելի իրագործման մանկավարժական դաշտը

Միևնույն ժամանակ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերի ընթացքում ձեռք բերվածը չի բավարարում արդի պահանջներին: Անհրաժեշտ է նպատակաուղղված ձևով կիրառել ֆիզիկական դաստիարակության արտադասարանական, արտադպրոցական և ինքնուրույն պարապմունքները, ինչպես նաև տնային հանձնարարությունները և հսկել դրանց կատարման ընթացքը {18}:

Նկար 2-ում պատկերված է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության հենքային մոդելը:

Այսօր հատկապես հստակ է արտահայտվում սովորողների ներգրավման միտումը դիդակտիկ գործունեություն, որում յուրաքանչյուր երեխա կարող է ոչ միայն ազդել դրա վրա, ինչը որ կատարվում է դասի ընթացքում, այլև ակտիվորեն ներգրավվել դրա մեջ: Դրա համար կիրառվում են բազմազան մեթոդներ սկսած դասերի յուրահատուկ թատերականացումից, վերջացրած երեխաների մոտ հուզական կողմը արթնացող վարժությունների կիրառումից: Հենց նման մոտեցմամբ են տարբերակվում ֆիզիկական կուլտուրայի դասի զարգացման ժամանակից միտումները:



Նկար 2. Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության հենքային մոդելը

Այսպիսով, հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակությունը իր բովանդակությամբ պետք է լինի առողջարարական, ըստ ձևի և մեթոդների՝ տարբերակված, բավարարի սովորողների դրդապատճառները: Այս տեսանկյունից ֆիզիկական դաստիարակության տեսությունը հանդիսանում է մանկավարժության բաժին: Նրանց միավորում է առարկայի և մեթոդի ընդհանրությունը, նրանց մոտ միանման են նպատակները, քանի որ երկուսի հիմնախնդիրն էլ հանդիսանում է աճող սերնդի դաստիարակությունը: Ֆիզիկական դաստիարակության տեսության կազմի մեջ մտնում է դպրոցահասակ երեխաների ֆիզկուլտուրային կրթության դիդակտիկան: Իր արմատներով այն սկիզբ է առնում ընդհանուր դիդակտիկայից, քանի որ զբաղվում է

այն ուղիների որոնմամբ և հետազոտությամբ, որոնք ֆիզիկական դաստիարակության ուսումնական աշխատանքների գործընթացում կարող են նպաստել դպրոցականների լիարժեք և բազմակողմանի կրթությանը:

Ի վերջո կարծում ենք, որ ֆիզիկական դաստիարակության վերակառուցման հիմնական ուղղությունը հանդիսանում է հանրակրթական դպրոցներում ուսումնական գործընթացի վերակողմնորոշումը դպրոցականների ֆիզիկական պատրաստությունից, երբ որոշիչ գործոն է հանդիսանում ուսումնական նորմերի կատարումը, դեպի ֆիզկուլտուրային կրթություն:

Ֆիզիկական դաստիարակության առկա համակարգի վերակառուցումը պետք է նախատեսի. հրաժարում բոլոր դպրոցների համար միանման պարտադիր ծրագրից, բեռնվածության մեծության, բովանդակության և ուղղվածության տարբերակման անհրաժեշտության ընդունումը՝ հաշվի առնելով դպրոցականների սենզիտիվ շրջանները, նյութատեխնիկական բազայի վերազինում, տվյալ դպրոցի կոնկրետ պայմանների հաշվառում: Այս առումով նշանակալի է շատ երկրների փորձը:

Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում գործում է ֆիզիկական կուլտուրայի 4 ծրագրեր՝ համալիր, առողջարարական ուղղվածության, մարզական և շարժողական ընդունակությունների մշակման համար: Ուսուցիչը իրավունք ունի ընտրելու այդ ծրագրերից ցանկացածը, որը ամենից շատ կհամապատասխանի տվյալ կրթական հաստատության աշխատանքային պայմաններին և կբավարարի ուսուցիչի ու նրա աշակերտների հետաքրքրությունները:

Եվ վերջապես, ամենակատարյալ մանկավարժական նախագծերը, գաղափարները, սկզբունքները, ծրագրերը և չափորոշիչները չեն կարող հաջողությամբ իրականացվել ինքնիստինքյան՝ առանց ուսուցիչների համապատասխան ջանքերի:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի բովանդակության և կառուցվածքի վերլուծությունը ցույց տվեց, որ մինչ այժմ դպրոցականները տիրապետում էին «սպորտայնացված» կարողությունների ու հմտությունների և վերջինս հանդիսանում էր ֆիզիկական դաստիարակության վերջնական նպատակը ու արդյունավետության գրեթե միակ չափանիշը:
2. Անհրաժեշտ է լիարժեք հաշվառել դպրոցականների անհատական սեռատարիքային ու հոգեբանական առանձնահատկությունները, պահանջմունքները և դրդապատճառները,
3. Միայն առաջնային շարժողական ընդունակությունների մշակումը բացասաբար է անդրադառնում դպրոցականների կատարելագործման վրա և թույլ չի տալիս իրագործել է ֆիզիկական դաստիարակության իրական գաղափարը,
4. Դպրոցականների արդյունավետ ֆիզիկական դաստիարակության համար մեծ նշանակություն ունի ոչ միայն շարժողական գործունեությունը, այլ նաև ֆիզկուլտուրային կրթությունը, ինչպես նաև բարոյական, գեղագիտական, աշխատանքային ինտելեկտուալ դաստիարակությունները,
5. Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ֆիզիկական կուլտուրան հանդիսանում է հասարակության ընդհանուր կուլտուրայի կառուցվածքային մասը, նրա կարևոր բաղադրիչը և չի ուղղորդվում միայն ֆիզիկական կատարելիությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.	Ավանեսով Է.Յու.	Մարզական ուղղվածության ֆիզիկական դաստիարակություն՝ ուսուցչի ընդլայնվող գործառույթները // Մանկավարժություն: 2011/7, էջ 11-17:
2.	Գրիգորյան Գ.Գ.	«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում: Մագիստրոսական ատենախոսություն, Երևան, 2012, 52 էջ:
3.	Ղազարյան Ֆ.Գ.	Ֆիզիկական դաստիարակության էությունը և նրա դերը դպրոցականների կրթության համակարգում // Մանկավարժություն, գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2012/2-րդ, էջ 45-48
4.	Ղազարյան Ֆ.Գ., Ստեփանյան Ա.Գ.,	Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի որոշ առանձնահատկություններ, «Մանկավարժական միտք», N1-Երևան, 2010, էջ 65-69:
5.	Ստեփանյան Ա.Գ., Գաբրիելյան Հ.Հ.	Հանրակրթական դպրոցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակության և կառուցվածքի նորարական մոտեցումներ // Մանկավարժություն, գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2011/2-րդ, էջ 12-21
6.	Ստեփանյան Ա.Գ.	«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման արդիականացման մասին «Մանկավարժական միտք», N 1-2, Երևան, 2011, էջ 119-124:
7.	Ստեփանյան Ա.Գ.	Տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության արդիականացման գործընթացում, «Մանկավարժական միտք», N 1-2, Երևան, 2012, էջ 77-82: